ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

<<ՍԻՍԻԱՆԻ Հ5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ-ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028թթ.

Տնօրենի պաշտոնի հավակնորդ՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

1. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը 9
2. Նպատակների և խնդիրների սահմանում 14
3. Ուսումնական հաստատության գործունեություն 17
4. 5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ 21
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ 24
7. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողություններ 29
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազա 31
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները 37

Նախաբան

<<Սիսիանի հ.5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է ՀՀ <<Կրթության մասին օրենք>>, ՀՀ << Հանրակրթության մասին օրենք>> , ՀՀ օրենք << ՊՈԱԿ-ի մասին >> , ՀՀ օրենք << Երեխաների իրավունքների մասին օրենք>>, ՀՀ օրենք << Լեզվի մասին>> , Ուսումնական հաստատության կանոնադրություն կետերի իրավական հիմքերով և 22.09.2022թ. ԿԳՄՍ նախարարի N35-ն հրամանի համապատասխան՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է,որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություն

27.08.2003 թվականին <<Սիսիանի հ.5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը

գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում (գրանցման համարը՝222.210.00174)

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 05.04.2011թ. հրամանով տրված լիցենզիաների՝ Ա N0825 և Ա N0815 դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- *Առաջին աստիճան- տարրական ընդհանուր կրթություն - 230 տեղ*
- *Երկրորդ աստիճան – հիմնական ընդհանուր կրթություն - 270 տեղ*

Սիսիանի հ.5 հիմնական դպրոցն ունի ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

1. Պետական գրանցման վկայական

2. Դպրոցի կանոնադրություն

3. Լիցենզիա՝ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի

4. Դպրոցի զարգացման ծրագիր

5. Առարկայական ծրագրեր

6. Ներքին կարգապահական կանոններ

7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

8. Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին

9. Դպրոցի շենքի սեփականության վկայական

10. Սովորողների շարժի մատյան

11. Սովորողի անձնական գործ

12. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան

13. Աշխատողների հրամանագիրք

14. Աշակերտների հրամանագիրք

15. Աշխատողի անձնական գործ

16. Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններ

17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ

18. Հաստիքացուցակ

19. Տարիֆիկացիոն ցուցակ

20. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատու անձը:

Դպրոցը բաղկացած է 2 մասնաշենքերից:

1-ին մասնաշենքը տիպային է, երկհարկանի՝ կառուցված 1963 թվականին: Նախատեսված է 290 աշակերտների համար:

Այնտեղ գործում են՝

1. *11 դասասենյակներ -490մ²,*
2. *տնօրենի կաբինետ-17.3մ²,*
3. *ուսուցչատուն -33.7մ²,*
4. *լաբորատորիա- 50.0մ²,*
5. *սանհանգույցներ (նաև ուսուցիչների համար առանձնացված) -48.2մ²,*
6. *մարզադահլիճ - 128.8մ²,*
7. *հանդիսությունների դահլիճ - 130մ²,*
8. *ճաշարան- 58.4մ²,*
9. *հանդերձարան 28.2մ²:*

2-րդ մասնաշենքը հարմարեցված քառահարկ շինություն է, որի 3-րդ և 4-րդ հարկերում բնակվում են 13 ընտանիքներ՝զբաղեցնելով 32 սենյակ:

1-ին և 2-րդ հարկերում (նախատեսված 210 աշակերտների համար) գործում են՝

1.7 դասասենյակներ -203 մ²,

2.ուսուցչատուն -28մ² ,

3. շախմատի դասարան-29մ²,

4. ԿԱՊԿՈՒ դասարան -27.5մ²,

5.սանհանգույցներ -67մ²,

6.համակարգչային 2 սենյակ -57մ²,

7.հաշվապահություն -18մ²,

8.լաբորատորիա -25մ²,

9.բուժկետ և այլ լրացուցիչ սենյակներ -18մ²:

3-րդ հարկում գործում են՝

1.ՆԶՊ կաբինետ -32մ²,

2.գրադարան -45մ²,

3.տեխնոլոգիայի կաբինետ -27մ²,

4.պահոց -18մ²:

Մասնաշենքները միասին կարող են տեղավորել 500 աշակերտ:

Դպրոցում առկա են 20 դասասենյակներ ՝4 առարկայական կաբինետներով, 2 լաբորատորիա, 2 արհեստանոց, 2 համակարգչային դասասենյակ:

2022-2023 ուսումնական տարվա կոմպլեկտավորման տվյալներով աշակերտների թիվը կազմում է 454:

<<Սիսիանի հ.5 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան , Նար-Դոսի 1 հասցեում:

Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն:

Ներառված են 13 աշակերտներ՝ ուսուցչի օգնականների խմբի 5 աշխատակիցների հոգածությամբ:

Դպրոցում աշխատում են 45 մանկավարժներ, բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն: Նրանցից երեքը կամավոր ատեստացիա անցած և հավելավճար ստացող ուսուցիչներ են:

Դպրոցում առկա են բացօթյա մարզահրապարակ,արհեստանոց, ջեռուցման անհատական համակարգ,մշտական ջրամատակարարում,ինտերնետ կապ,անխափան հոսանք, ջերմոց, արևային վահանակներ:

Դպրոցի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար դպրոցն ունի անհրաժեշտ գույքը, ապահովված է տեխնիկական անհրաժեշտ սարքավորումներով: Համակարգչային սենյակները համալրվել են համակարգիչներով,պրոեկտոր-գրատախտակով, որն ավելի արդյունավետ է դարձնում դասապրոցեսի կազմակերպումը:

ՏՀՏ-ների կիրառումը աշակերտների և ուսուցիչների կողմից դասի կազմակերպումն ավելի հետաքրքիր է դարձնում: ՏՀՏ-ներիկիրառումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, զարգացնում է հեռավար կրթություն մանկավարժների և ուսուցիչների շրջանում, ավելի հմուտ և ձեռնհաս դարձնում նրանց:

Դպրոցն ունի ջերմոց, որի միջոցով <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում կարողանում է ապահովել երեխաներին լրացուցիչ սնունդով : Առկա արևային վահանակների միջոցով դպրոցը թեթևացնում է իր էլեկտրաէներգիայի խնդիրները և ունենում հավելյալ եկամուտ:

Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ.

1. Կառավարման խորհուրդ
2. Մանկավարժական խորհուրդ
3. Ծնողական խորհուրդ
4. Աշակերտական խորհուրդ

Բոլոր խորհուրդներն ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդները գործում են անկախ, կանոնավոր գումարում նիստեր և կազմակերպում իրենց աշխատանքները՝ նպաստելով դպրոցի ուսումնադաստիարակչական և
կառավարման գործընթացին:

Դպրոցում գործում են 4 առարկայական մեթոդական միավորումներ.

1. Լեզուների
2. Բնագիտական
3. Հասարակագիտական
4. Դասվարների

Խորհրդակցական մարմինների գործունեությունը շատ կարևոր է դպրոցի համար, և նրանց աշխատանքի արդյունավետությունը պետք է նպաստի դպրոցի լավ, բեղուն և նպատակաուղղված աշխատանքին:

Կառավարման խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի գործունեությանը շահագրգիռ անձինք,նրանց հավանությամբ ամրապնդվում է դպրոցի նյութատեխնիկական բազան:

Աշխատանքային պլանը,ուսումնադաստիարակչական պլանը և դասաբաշխումը հավանության են արժանանում մանկավարժական խորհրդի կողմից:
Պարբերաբար պետք է հրավիրվեն նիստեր մեթոդական միավորումների կողմից,իրականացվի աշխատանքի վերլուծություն, դասագրքերի ծրագրային քննարկումներ:

Դպրոցում աշակերտական խորհրդի դերը մեծ է: Աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան,անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք է ներկայացնում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին: Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին,որտեղ քննարկվում են անմիջապես աշակերտներին վերաբերող հարցեր:
Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման լիազոր մարմինների,ԿԶՆԱԿ-ի, ADRA,

ՀՕՖ, <<Թումո>> կազմակերպությունների հետ, համայնքապետարանի հետ՝ փորձելով մասնակցություն ցուցաբերել միջոցառումներին, քննարկել և լուծել նյութատեխնիկական, սանիտարահիգիենիկ և այլ կարևոր խնդիրներ օրենքի շրջանակներում:

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման անձնական մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ: Սովորողին կրթում է և դաստիարակչական ազդեցություն է ունենում:

Շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, տրամադրող, մոտիվացնող ուսումնական միջավայր:Դպրոցում չպետք է լինեն սովորողների նկատմամբ բռնության՝ ֆիզիկական, հոգեբանական ճնշումներ, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Ծնողները, ինչպես նաև երեխաները, պետք է համոզված լինեն, որ դպրոցում իրենք պաշտպանված են, և տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Պետք է մշտապես հոգ տանել սովորողների առողջության պահպանման համար, վերահսկել բացակայությունները, պահպանել համաճարակային կանոնները, ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ ծնողները հաճույքով իրենց երեխաներին կուղարկեն ուսումնառության:

Դպրոցում աշխատում են 45 մանկավարժներ, որոնք ունեն բարձրագույն կրթություն, նրանցից 3-ը կամավոր ատեստավորված են: Ուսուցիչները մասնակցում են հերթական ատեստավորմանը, ինչպես նաև կրթությանը աջակցող կազմակերպությունների կողմից կատարվող վերապատրաստման և ուսուցողական այլ դասընթացների: Դպրոցի ուսումնական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ կթության կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:

Դպրոցի նպատակն է մանկավարժական համակազմի և ուսումնաօժանդակ աշխատակիցների պարբերական համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով:

1. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.1 Հաստատության շենքային պայմաններ	
Դպրոցի 2 մասնաշենքերը կառուցվել են 1.3 հեկտար տարածքի վրա և ամբողջությամբ ցանկապատված են: 1-ին մասնաշենքի թվով 6 սանհանգույցները (48.2 մ²) վերանորոգված են: 1-ին մասնաշենքի թվով 11 դասասենյակները(ընդհանուր 490 մ²) վերանորոգված են: Դպրոցի 2 մասնաշենքերի ծածկերը ամբողջությամբ վերանորոգված են, տեղադրված են 40կվ հզորության արևային մարտկոցներ: Դպրոցը ջեռուցվում է լոկալ եղանակով: Դպրոցում առկա է ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա ՝54մ² մակերեսով համապատասխան գույք և սարքավորումներով:Գործում է 2 հանդերձարան ՝նախատեսված տղաների և աղջիկների համար ՝28մ² մակերեսով, մարզադահլիճ՝ 128.8մ² մակերեսով, հանդիսությունների դահլիճ՝130 մ² մակերեսով, բացօթյա խաղահրապարակ ՝1400մ² մակերեսով,արհեստանոցներ ընդհանուր 220մ², որոնք վերանորգման կարիք ունեն: Դպրոցը ունի նորոգված ճաշարան, որտեղ սնվում են տարրական դասարանների 210 աշակերտներ:	2-րդ մասնաշենքի 4 սանհանգույցներ կարիք ունեն վերանորոգման (67մ²): 2-րդ մասնաշենքի թվով 7 դասասենյակներ (203մ²)կարիք ունենվերանորոգման: Պահակակետը և հանդերձարանները վերանորոգման կարիք ունեն: Տարրական դասարաններում տաք սնունդ տրամադրելու համար դպրոցը չունի համապատասխան սեղա-աթոռներ, չունի ջեռուցման համակարգ, քանի որ ճաշարանը ուշ է գործարկվել:
1.2 Հաստատության նյութատեխնիկական բազան	
Դպրոցում գործում է ՀՕՖ-ի կողմից վերանորոգված և կահավորված ֆիզիկա, քիմիա առարկաներին անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով լաբորատորիա 54մ² մակերեսով: Դպրոցում առկա են նաև <<Կենսաբանություն>>, <<Երկրաչափություն>>, <<Հանրահաշիվ>>,<<Մաթեմատիկա>>, <<Աշխարհագրություն>> առարկաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր , պաստառներ, սարքավորումներ: Առկա է շախմատի դասասենյակ ՝29 մ² մակերեսով համապատասխան սեղաններ, խաղադաշտ և խաղաքարեր ՝ նախատեսված 30 աշակերտների համար: Դպրոցում գործում են 2 համակարգչային դասասենյակներ, դպրոցն ունի 1 շարժական պրոյեկտոր, 1 ֆիքսված պրոյեկտոր, 30 համակարգիչներ, 3 նոթբուք: Գործում է մարզադաշտ ՝220մ² , մարզադահլիճ՝ ՝128մ²: Գործում է գրադարան՝45մ² մակերեսով, առկա են բոլոր աշակերտների համար նախատեսված դասագրքեր, որոնց օգտագործման ժամկետը լրանալուց փոխարինվում են նորերով: Առկա է ուսումնաօժանդակ և գեղարվեստական գրականություն 2750 կտորով:	Դպրոցում չկան առարկայական կաբինետներ: Համակարգիչները թվով 20 հատ, չեն համապատասխանում առկա հզորություններին: Համակարգչային և շախմատի դասարանները չեն համապատասխանում նախատեսված նորմերին: Դպրոցում չկա ընթերցասրահ:
1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն	
Դպրոցում գործում է կանոնադրություն համաձայն կառավարման առանձին խորհուրդ կազմված է 9 անդամներից , որոնք առաջադրվել են 2-ական մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից, 1 հոգի ԿԳՄՄՆ-ի կողմից, 4 հոգի մարզպետարանի կողմից, որից 2-ին համայնքապետարանի առաջարկությամբ:Խորհուրդը գործում է ըստ կանոնադրության , իր լիազորությունների սահմաններում իրականացնում է դպրոցի ընթացիկ և դպրոցի զարգացման ծրագրի	2022թ. նիստերում 2 անգամ քվորում չի ապահովել, և նիստերը ըստ կարգի հետաձգվել են: Խորհրդի անդամների նախաձեռնության պակաս:

վերահսկումը, քննարկում և առաջարկություններ է անում դպրոցի առաջիկա անելիքների մասով: *Առկա է արձանագրությունների մատյան ,որտեղ գրանցված են նիստերի օրակարգերը և որոշումները: Նիստերը տեղի են ունեցել 2021 թվականին 6 անգամ, 2022թ. ՝ 7 անգամ, 2023թ. ՝ 2 անգամ:*	
1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական, համայնքային , կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպության հետ :	
Միսիանի հ.5 հիմնական դպրոցը ակտիվորեն համագործակցում է Միսիանի համայնքապետարանի, ծնողական համայնքի, Սյունիքի մարզպետարանի, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի ՍՏՄԱԿ-ի, Ոստիկանության, պոլիկլինիկայի, ՀՕՖ-ի, ԱԴՐԱ-ի հետ և պատրաստ է համագործակցել բոլոր այն կազմակերպությունների հետ ,օրենքի շրջանակներում, որոնք կգործեն ի շահ աշակերտների բարեկեցության և կրթության որակի բարձրացման (հիարկե , օրենքի շրջանակներում): *Դպրոցի աշակերտներից 73-ը մասնակցել է համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական խմբակներին:* *Մշտապես մասնակցում է համայնքի կողմից կազմակերպած միջոցառումներին, մասնավորապես շաբաթօրյակներ, փառատոներ, մրցույթներ, ընթերցանություններ համայնքի գրադարանի կողմից կազմակերպված և այլ միջոցառումների:* *Անհրաժեշտություն կա խորացնել համագործակցություն ծնողների հետ ՝կապված նոր չափորոշիչով երկարօրյա ուսուցման կազմակերպման հետ առնչվող հարցերով, որը կնպաստի դպրոցի առաջընթացին:*	Ծնողների մոտ 30 % -ը դժվարությամբ է համագործակցում դպրոցի հետ: Դպրոցում չի գործում երկարօրյա ուսուցում
1.5 Մանկավարժական համակազմի և մասնագիտական որակների ներկայացումը	
Դպրոցում աշխատում են 40 ուսուցիչներ և 5 ուսուցչի օգնականներ ,բոլորը բարձրագույն կրթությամբ, 38-ը դասավանդում է համապատասխան առարկաներ ըստ ստացած որակավորման: *<<Երաժշտություն>> և <<Տեխնոլոգիա>> առարկաների ուսուցիչները ունենալով բարձրագույն կրթություն չեն համապատասխանում իրենց զբաղեցրած պաշտոններին, բազմիցս հայտարարվել է մրցույթ, մասնակից չ լինելու պատճառով , օրենքի սահմաններում տվյալ ուսուցիչները ժամանակավոր աշխատում են մինչև համապատասխան մասնագետների ընդունումը : Պարբերաբար (ըստ օրենքի) հայտարարվում է ուսուցչի թափուր տեղի մրցույթ:* *Դպրոցում աշխատել են 5 ուսուցիչներ, որոնք ունեցել են տարակարգ 5 տարի ժամանակով: Նախորդ տարի բոլորի ժամկետները լրացել են և պետք է տարվեն բացատրական աշխատանքներ, որպեսզի ուսուցիչները մասնակցեն տարակարգի մրցույթներին:* *Դպրոցում աշխատում են կամավոր ատեստավորված 3 ուսուցիչներ և ստանում են հավելավճար ՝օրենքով սահմանված կարգով: Այս տարի 11 ուսուցիչներ, ներառյալ <<Տեխնոլոգիա>> և <<Երաժշտության>> առարկաների ուսուցիչները հայտ են ներկայացրել կամավոր ատեստավորման: Դպրոցում աշխատող 39 ուսուցիչներ (բացի ՆԶՊ ուսուցչից) 2023 մարտից մինչև հուլիս մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում ներդրված ՀՊՉ դասընթացներին և բարեհաջող ավարտել: 40 ուսուցիչներից 7-ը կենսաթոշակային տարիքի են:*	*Որակավորված մանկավարժների սակավություն* *Աշխատող ուսուցիչների բարձր տարիքային շեմ*
1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նպատակների ներկայացում	

Դպրոցում առկա է ինտերնետ կապ՝ 2 տարբեր՝ Ucom և TEAM ընկերությունների կողմից: Կրթական գործընթացը կազմակերպվում է ՏՀՏ-ների օգտագործմամբ : Դպրոցում առկա են 2 համակարգչային դասարան, 2 լաբորատորիա, 1 շարժական և 1 ֆիքսված պրոյեկտոր, 3 նոթբուք, 30 համակարգիչ՝ տարբեր հզորությունների: <<Ինֆորմատիկա>> առարկայի դասերը անցնում են համակարգչային դասարաններում: Մնացած գրեթե բոլոր առարկաներից, ամսական առնվազն 1 դասաժամ, ևս անց են կացվում համակարգչային դասարաններում՝ օգտագործելով ՏՀՏ գործիքներ, ապահովելով համագործակցությունը սովորողների և ուսուցիչների միջև: Աշակերտների ուսումնադաստիարակչական գործունեությունը (դասացուցակ, ուսումնական պլան, թեմատիկ պլան, խմբակների գործունեություն, գնահատականներ և այլն) իրականացվում են էլեկտրոնային եղանակով, վարվում է համապատասխան ուսուցիչների կողմից և ստուգվում է տնօրենի , փոխտնօրենների մեթոդմիավորումների նախագահների կողմից: Դպրոցն ունի դպրոցական կայք, ֆեյսբուքյան էջ, որտեղ արտացոլվում է դպրոցի ամբողջ գործունեությունը: Դպրոցի հաշվապահական գործընթացը իրականացվում է ՀԾ ծրագրի միջոցով: Աշակերտների ուսումնական գործընթացները գրանցված են էլեկտրոնային դասամատյաններում, վարվում են համապատասխան ուսուցիչների և դասղեկների կողմից, ստուգվում են տնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորումների նախագահների կողմից:	Ընդարձակ համակարգչային դասասենյակի բացակայություն: Վերջին սերնդի համակարգիչների բացակայություն: Աշխատակիցների ոչ լիարժեք տիրապետում օրեցօր զարգացող տեխնոլոգիաներին:

1.7 Չափորոշչի պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Դպրոցում վերջին 5 տարիների գործել է 18 դասարան:Վերջին 3 տարիների չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը հետևյալն է.

տարի	Աշակերտ. թիվ			գերազանց			լավ			որակ		
դասարան	2021թ.	2022թ.	2023թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2021թ.	2022թ.	2023թ.
I	51	61	39	-	-	-	-	-	-	-	-	-
II	63	52	60	43	4	30	10	10	18	85%	94%	84%
III	55	59	53	26	35	26	15	15	19	75%	85%	92%
IV	42	49	59	19	26	18	13	11	24	75%	83%	81%
V	56	39	47	24	17	13	15	8	15	65%	63%	71%
VI	52	55	41	23	22	8	5	8	10	54%	70%	57%
VII	56	47	55	18	15	8	7	7	12	45%	49%	59%
VIII	55	50	49	8	12	7	10	11	12	32%	58%	56%
IX	42	55	50	10	8	5	9	11	12	40%	52%	48%
Ընդ.	472	467	445	171	139	181	84	81	122	59%	69%	68.5%

Դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադաներին և արձանագրել են հետևյալ արդյունքները.

Տարի	Տարածաշրջանային փուլ	Մարզային փուլ	Հանրապետական փուլ
2021	20 մրցանակային տեղ	5 մրցանակային տեղ	
2022	18 մրցանակային տեղ	10 մրցանակային տեղ	3 գովասանագիր (պատմություն, ՀԵՊ
2023	17 մրցանակային տեղ	2 մրցանակային տեղ	1հատ գովասանագիր (Քիմիա) 1 հատ 2-րդ կարգի մրցանակ (ՀԵՊ)

Վերջին 3 տարիների ընթացքում գերազանցության վկայական ստացած աշակերտների վերլուծությունը.

Տարին	Գերազանցության վկայական ստացած աշակերտների թիվը
2021	7
2022	3
2023	8

Դպրոցի կրթության որակի ընդհանուր վերլուծությունը կատարվում է տարեկան 2 անգամ՝ կիսամյակային ամփոփումից հետո: Կատարվում է վերլուծություն ըստ առարկաների, ընթացիկ ստուգումների, գնահատման և հետադարձ կապի միջոցով՝ համեմատելով նախորդ արդյունքների հետ, այնուհետև որոշվում են հետագա անելիքները:

1.8 Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցում ուսումնադաստիարակչական և ուսումնաօժանդակ աշխատանքները իրականացվում են ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան, հաշվի են առնվում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կարծիքները որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու ընթացքում:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է կառավարման խորհրդի հետ, որոշումներ կայացնելիս հաշվի առնում խորհրդի կարծիքը և առաջարկները:

Դպրոցում այս պահին սովորում են 13 ներառված աշակերտներ: Վերջին 3 տարիներին ներառված աշակերտների պատկերը հետևյալն է.

Տարին	*Ըստ գնահատման վկայագրի*				*Ընդամենը*
	Ծանր	*Խորը*	*Միջին*	*Թեթև*	
2021թ.		1	7	5	13
2022թ.	1	1	6	5	13
2023թ.		2	5	6	13

Բոլոր ներառված աշակերտների համար համապատասխան դասավանդող ուսուցիչների կողմից կազմված է ԱՈՒՊ-ներ՝ համաձայնեցված ուսուցչի օգնականների և աջակցության կենտրոնի հետ: Ներառված աշակերտների համար գործում է համապատասխան դասասենյակ,

անհրաժեշտ պարագաններ և սանիտարահիգիենիկ միջավայր՝ համապատասխան սովորողի կրթական, սոցիալական, առողջական շահերի և իրավունքների, որը խթանում է արժեքային միջավայրի ձևավորմանը:

Դպրոցում բացատրական աշխատանքներ են տարվում, որպեսզի բացառվեն խտրականությունը, բռնությունը, հալածանքը, բուլինգը, անձի թերագնահատումը, վիրավորանքը՝ անկախ սեռից, կրոնից, ազգությունից և այլ սոցիալական վիճակից. բոլորը հավասար են օրենիքի առաջ:

1.9 Աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն.

Դպրոցում աշխատող մանկավարժները ամեն տարի անցնում են հերթկան ատեստավորում 20%-ի չափով: 2022 թվականին ատեստավորվել է 6 մանկավարժ, 2023 թվականին նախատեսված է 9 մանկավարժների ատեստավորում:

Դպրոցում աշխատում են կամավոր ատեստավորվումն անցած 3 մանկավարժներ, այս տարի կամավոր ատեստավորման հայտ են ներկայացրել բարձրագույն կրթությամբ տասը և միջին մասնագիտական կրթությամբ երկու ուսուցիչներ:

Դպրոցի 2-րդ, 5-րդ , 7-րդ դասարանների դասավանդող բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած նոր չափորոշիչներին համապատասխան դասընթացներում:

Դպրոցում առկա են հնարավորություններ աշխատողների համար ինքնակրթությամբ զբաղվելու, որակավորումը բարելավելու, նոր չափորոշիչներին համապատասխան նախապատրաստվելու ուսումնական գործընթացին:

2020 թվականին բոլոր աշխատողները ստացել են պարգևավճար (2369720 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ):

2021 թվականին բոլոր աշխատողները ստացել են պարգևավճար (4531084 (չորս միլիոն հինգ հարյուր երեսունմեկ հազար ութունչորս) ՀՀ դրամ):

2022 թվականին բոլոր աշխատողները ստացել են պարգևավճար (4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ), իսկ հանրապետական օլիմպիադայի 2-րդ կարգի դիպլոմ ստացած աշակերտի ուսուցիչը լրացուցիչ պարգևատրվել է 1 ամսվա աշխատավարձի չափով:

1.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց

արդյունավետությունը, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրները

Վերջին երեք տարիների աշակերտ-անձնակազմ , աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը հետևյալն է.

N	*2021թ.*	*2022թ.*	*2023թ.*
Աշակերտների թիվը	474	454	447
Անձնակազմի թիվը	57	63	62
Հարաբերակցություն	1/8.13	1/7.2	1/7.2
Ուսուցիչների թիվը	40	39	38
Հարաբերակցություն	1/11.85	1/11.6	1/11.8

Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 20% 5 տարին մեկ անցնում են հերթական ատեստավորում: 2021 թվականին ուսուցիչների հերթական ատեստավորում տեղի չի ունեցել համաճարակի բռնկման պատճառով:

2022թ. ուսուցիչների հերթական ատեստավորմանը մասնակցել են 6 ուսուցիչներ և ծախսվել է 192000 դրամ: 2023թ.կմասնակցեն 9 ուսուցիչներ , և կծախսվի 288000 դրամ: Այս տարի ավելի շատ գումար է նախատեսված, քանի որ վերապատրաստվողների թիվը 3-ով ավել է նախատեսված նախորդ տարվա համեմատ:

Հիմնական ծախսերի տարբերությունը մեծ չէ, բայց կա որակի որոշակի աճ: 2021թ, դպրոցի կրթության որակը կազմել է 59%, 2022թ. –ին՝ 69%, 2023թ.-ին 68,5%:

2.Նպատակների և խնդիրների սահմանում

Առանձնահատուկ ուշադրություն դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ենթադրում է սովորողների կրթության մակարդակի բարձրացում, դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում: Ապահովել արդար, սկզբունքային գնահատում, կիրառել գնահատման նոր մոտեցումներ՝ նոր չափորոշիչներին համապատասխան:

Ապահովել դպրոցը ուսումնամեթոդական գրականությամբ: Մշակել դասալսման և ուսուցչի աշխատանքի գնահատման բովանդակալից, թվային ամփոփվող ձևեր:

Ուսուցիչների կողմից համակարգչային գիտելիքներ ձեռք բերելու և կատարելագործելու նպատակով կազմակերպել ներդպրոցական ուսումնական միջոցառումներ:

Խրախուսել մանկավարժներին հետազոտական աշխատանքներ կատարել և ներկայացնել սեփական գիտակրթական նյութերը:

Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև:

Խթանել ուսուցիչների մասնակցությանը տարբեր մրցութային և կատարելագործման ծրագրերին:

Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել կրթության որակի փաստացի վիճակը, որի համար շատ կարևոր են արտաքին և ներքին գնահատումը, դասալսումները, վիճակագրական վերլուծությունները և արդյունքների համադրումը:

Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել և զարգացնել գիտելիքներ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն ժամանակակից աշխարհում բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային մոտեցումներ: Կարողությունների ձևավորմանն ուղղված դասերը հնարավորություն են տալիս ոչ ավանդական ձևերով և մեթոդներով ընդհանրացնել աշակերտների գիտելիքները, զարգացնել նրանց մտածողական գործունեությունը, աշակերտների մեջ ներշնչել վստահություն, համարձակություն և հետաքրքրասիրություն:

Դպրոցում ուսման որակի վրա մեծ ազդեցություն են ունենում տարբեր առարկայական օլիմպիադաներում աշակերտների գրանցած արդյունքները, ԳԹԿ-ի կողմից գիտելիքների ստուգման համար նախատեսված գրավոր աշխատանքերի արդյունքները:

Ուսման որակի բարելավման աշխատանքները պետք է սկսել տարրական դպրոցից:

Դպրոցի արդյունավետ գործունեության համար կարևորագույն պայմաններից է լիարժեք նյութատեխնիկական ապահովվածությունը:

Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում:

Դպրոցի նպատակներն ու խնդիրները իրար հետ խիստ կապված են: Կարևոր խնդիրներից մեկը դպրոցի 2-րդ մասնաշենքում առկա բնակիչներն են: Խնդրի լուծման արդյունքում կմեծացվեն դասասենյակները, գրադարանը կվերանորոգվի, կընդարձակվի, կհամալրվի ժամանակակից անհրաժեշտ տեխնիկայով, բուժկետը կընդարձակվի, կդառնա հարմարավետ:

Տարրական դասարանների աշակերտների <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում ճաշարանի սեղան-աթոռների փոխելու և ջեռուցման համակարգը

արդիականացնելու խնդիր ունենք:

Անհրաժեշտություն կա փոխել 2-րդ մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի պատուհանները, կահավորել մարզադահլիճը՝ ապահովելով սովորողների ֆիզիկական առողջությունն ու հոգու ներդաշնակությունը, բարեկարգել դպրոցի բակը՝ ապահովելով սովորողների ***հանգիստը, ձևավորելով սիրո և հոգատարության զգացում դեպի հայրենի բնությունը:***

Դպրոցի զարգացման ծրագիր գրելու նպատակով մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհրդների հետ հանդիպումների ժամանակ բարձրացվել են որոշ խնդիրներ, որոնք ներառվել են դպրոցի զարգացման ծրագրում:

	Նպատակ	***Խնդիրներ***
1	Չափորոշիչների համապատասխան կրթության ապահովում	Բոլոր ուսուցիչները պետք է տիրապետեն առարկայական նոր չափորոշիչներին:
2	Ուսուցման արդյունավետության բարձրացում	Գործնական աշխատանքների ավելացում, ուսուցման նոր մեթոդների ներդրում
3	Աշակերտների, դասարանների մրցակցային ուսուցման ապահովում	Աշակերտներին մասնակից դարձնել առարկայական օլիմպիադաներին, տարբեր տեսակի մրցույթներին
4	Դպրոցի մանկավարժական համակազմի որակավորման բարձրացում	Խթանել և խրախուսել ուսուցիչների մասնակցությունը տարբեր վերապատրաստումների, դասընթացների և կամավոր ատեստավորման և տարակարգի մրցույթի
5	Սկսնակ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացում	Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև: Կատարել հաճախակի փոխադարձ դասալսումներ և քննարկումներ
6	Աշակերտների և աշխատողների մոտ ձևավորել սիրո և հոգատարության զգացում շրջապատի և բնության նկատմամբ	Բարեկարգ պահել դպրոցի շրջապատը, կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ և արշավներ, տանել բացատրական աշխատանքներ, որոշ դասեր անցկացնել բնության գրկում
7	Ուսուցման համար բարենպաստ պայմանների ապահովում	Բարեկարգել դասասենյակները, տեխնոլոգիայի կաբինետը, մարզադահլիճը, հանդերձանները,սանհանգույցները
8	Աշակերտների առողջության ապահովումն ու անվտանգ կենսագործունեության ապահովում	Բոլոր տիպի անվտանգ միջավայրի ձևավորում, տարրական դասարաններում լրացուցիչ սննդի ապահովում, ճաշարանում նոր համապատասխան միջավայրի ստեղծում

3.Հաստատության գործունեությունը.

3.1 Կրթական կարիքների նկարագրությունը

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Ժամանակակից գիտությունը և տեխնիկան զարգանում են մեծ արագությամբ՝ ներթափանցելով կյանքի կազմակերպման, հասարակական հարաբերությունների, գիտելիքների ձևավորման, գիտելիքների ձեռքբերման և փոխանցման ոլորտ: Այդ պատճառով հանրակրթության էական բարեփոխումը և աննախադեպ զարգացումը դառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:Դպրոցում հոգևոր մշակույթի սաղմերը ամրապնդվում են ժողովրդի լինելիությամբ,բարգավաճմամբ և զարգացմամբ:

Ուսումնական հաստատության առաջիկա հինգ տարիների տեսլականը մրցունակ դպրոց ունենալն է, որտեղ յուրաքանչյուր կրթական աստիճանի շրջանավարտի , այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ-ի, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները միտված կլինեն հանրակրթության պետական չափորոշչի պահանջների ապահովմանը: Իսկ մրցունակ դպրոց ձևավորելու համար պետք է յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրություն ապահովել, ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ ամեն մի սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ, դառնալ վաղվա որակյալ մասնագետը:

Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին համալրվելու կարողությունը: Ուստի դպրոցի առաջընթացը պետք է լինի դինամիկ և ծրագրավորված:

Ըստ կրթական կարիքների դպրոցն իր առաքելությունն է համարում ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել համակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, հայրենասեր և հայրենատեր , ազգային արժեքների կրող, մրցունակ, մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

Այդ ամենի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:

Ինչպե՞ս կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները.

ա. հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպել դասապրոցեսների (ուսումնական նախագծերի և ուսումնական խմբակների) նպատակային ժամանակակից մանկավարժական մոտեցումներով,

բ. յուրաքանչյուր սովորողի համար անկախ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներից, ազգությունից և այլ առանձնահատկություններից կրթության հավասար իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում նպատակային ժամանակակից մանկավարժական մոտեցումներով,

գ. ժամանակակից կրթական ծրագրերի ներդրում, որոնք համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին և նպաստում են սովորողների հիմնական կարողունակությունների ձեռքբերմանը,

դ. աշակերտական դասավանդման տարբերակված ռազմավարությունների իրականացում նպատակային և հասցեական յուրաքանչյուր սովորողի համար,

ե. սովորողների ուսուցման և ուսումնառության գնահատման ռազմավարական համակարգերի ներդրում և կառավարում, որոնք հնարավորություն կտան գնահատել կատարված աշխատանքի արդյունավետությունը և յուրաքանչյուր սովորողի կրթադաստիարակչական առաջընթացը:

Հաստատության գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

Հաստատության լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը, սերմանել արժանապատվություն,հայրենասիրություն,պատասխանատվություն, հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:Կարևոր է նաև ուսուցողական միջավայրը դարձնել անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:

3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին. համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին:

Սյունիքի մարզի «Սիսիանի հ.5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան:

Դպրոցում բացառված են քաղաքական գործունեությունն ու կրոնական քարոզչությունը:Կրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի.

ա. մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը,

բ. մարդկային արժանապատվության պահպանմանը,

գ. ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի

նախապատրաստմանը,

դ. մասնագիտական կողմորոշմանը,

ե. որպես ապագա համակողմանիորեն զարգացած քաղաքացու ձևավորմանը:

Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը, որը համապատասխանում է շահառու խմբերի (ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, համայնք) դրական արդյունքների ձեռքբերմանը, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը՝ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, տոնակատարություններ, հանդիպումներ, էքսկուրսիաներ և այլն: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ անցկացնելիս:

Սովորողները հանդիպումներ, քննարկումներ են ունենում համայնքի ներկայացուցիչների, քաղաքացիների հետ, որի արդյունքում իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի զարգացմանը և կարիքների հետազոտմանը:

Մշտապես կատարվել և կատարվում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառում և ընդգրկում ուսումնական հաստատություն:

Հաստատության զարգացման նպատակով դպրոցն իր գործունեության ընթացքում հաշվի է առնում համայնքի կարիքներն ու ներուժը՝ առաջարկելով նոր ծրագրեր ու մոտեցումներ նախագծային աշխատանքներ իրականացնելու համար:

3.3. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Դպրոցն ունի հանդիսությունների դահլիճ (130 մ²)՝ լոկալ ջեռուցմամբ, մասամբ է վերանորոգված, ունի հատակի փոխման անհրաժեշտություն, մարզադահլիճ (128մ²), որը կոսմետիկ վերանորոգված է , առկա են 2 հանդերձարաններ (տղաների և աղջիկների): Չկան առանձնացված լվացարաններ: Կարիք կա մասնակի վերանորոգել հանդերձանները:

Դպրոցն ունի ֆիզիկայի և քիմիայի վերանորոգված լաբորատորիա (ՀՕՖ-ի կողմից)՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով և նյութերով: Բացի դրանից առկա են ԲՏՀՄ մյուս առարկաներին վերաբերող համապատասխան դիդակտիկ պարագաներ, քարտեզներ և այլ անհրաժեշտ նյութեր:

Դպրոցն ունի արհեստանոց, որը խիստ անմխիթար վիճակում է (այն եղել է նախկին ուսումնարանի արհեստանոցը): Դպրոցում առկա են առարկայական չորս կաբինետներ (հայոց լեզու և գրականություն, շախմատ, տեխնոլոգիա, քիմիա):

Դպրոցում գործում է ճաշարան, որտեղ սնվում են տարրական դասարանների 210 աշակերտներ այսինքն՝ դպրոցում իրականացվում է Պարենի համաշխարհային կազմակերպության կողմից իրականացվող «Դպրոցական տաք սնունդ» ծրագիրը: Ճաշարանն ունի անհրաժեշտ բոլոր միջոցները (սառնարան, տաքացուցիչ և այլն) անվտանգ սնունդ ապահովելու համար, նախատեսվում է փոխել ճաշարանի սեղաններ-աթոռները՝ համապատասխան պահանջվող չափորոշիչներին:

Դպրոցում գործում է բուժկետ (13մ²), որտեղ աշխատում է Սիսիանի ԲԿ-ի կողմից վերահսկվող մեկ աշխատող: Բուժկետը կահավորված է առաջին անհրաժեշտության պարագաներով՝ պահարան, սեղան, կշեռք, մահճակալ, առաջին օգնության արկղիկ, հասակաչափ, ջերմաչափեր:

Դպրոցն ունի գրադարան՝ ուսումնական գրքերով, ձեռնակներով, գեղարվեստական գրականությամբ: Գրադարանի տարածքը կարիք ունի ընդարձակման: Դպրոցի աշխատողների թիվը 61 է, որից 45-ը մանկավարժական աշխատող, 3 վարչական, 13 ուսումնաօժանդակ, որոնց որակավորումը համապատասխանում է իրենց կատարած աշխատանքներին:

4/5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Պատասխանատուներ	
1	Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում	Դասի ավելի արդյունավետ կազմակերպում	2023-2028թթ	Տնօրեն ուսմասվար մ/մ նախագահ	
2	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում ատեստավորման	Ժամանակակից մեթոդների օգտագործում	Տարվա ընթացքում	Տնօրեն ուսմասվար մ/մ նախագահ	
3	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ ուսուցիչների համար	ՏՀՏ-ների օգտագործում դասի ընթացքում	2023-2026թթ	Տնօրեն օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ	
4	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա	Դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացում	2023-2028թթ	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ	
5	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Դասապրոցեսին ավելի հեշտ ինտեգրում	Տարվա ընթացքում	Տնօրեն հատուկ մանկավարժ, ուսուցչի օգնական Հոգեբան	
6	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Մշակութային ինտելեկտի զարգացում	Տարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ ԴԱԿ	
7	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Ավելի խոր և մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքի պայմաններին և նրանց ստեղծագործություններին	2023-2028թթ	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ համայնքապետարան	
8	Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարակայական ուսուցիչների հետ	Ուսուցիչ- ծնող, ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթության որակի բարձրացում	2023-2028թթ	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ դասղեկ ծնող	
9	Ռազմահայրենասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Ռազմահայրենասիրության մակարդակի և ընկալման բարձրացում	2023-2028թթ	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ Զինղեկ, պատմության ուսուցիչներ	
10	Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում	Առողջ մարմնում առողջ հոգի	2023-2028թթ	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
11	<<Թումո>> տուփի բացում	Նոր հնարավորություններ երեխաների համար	2024-2025թթ	Տնօրեն Համագործակցություն համապատասխան	

		համագործակցության		կազմակերպության ներկայացուցչի հետ	
12	Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը	Ավելի հեշտ կհաղթահարեն իրենց կարիքները	2023-2024թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
13	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	Պրակտիկ և տեսական դասերի համախմբում	2023-2026թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
14	Գեղագիտական խմբակների հիմնում	Գեղեցիկի մասին պատկերացումներ ստեղծելու և աշխարհը գեղեցիկ ընկալելու հնարավորություն	2024-2025թթ	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ	
15	Մարզադահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում	Ավելի հետաքրքիր և բովանդակալից դասի կազմակերպում, սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ	2023-2025թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
16	Ուս.հաստատության կանաչ տարածքների բարեկարգում	Երեխաների մոտ հոգատարության և շրջապատի հանդեպ հետաքրքրասիրության ավելացում	2023-2028թթ	Տնօրեն, Վարչատնտեսական համակարգող ԱԽ	
17	Հոգեբանի և ուսուցչի օգնականների արդյունավետ աշխատանքի ապահովում	Ներգրավվածության աստիճանի բարձրացում	2023-2028թթ	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ Դասղեկներ ուսուցիչներ	
18	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնային փաթեթի	Դպրոցի գործունեության հասանելիություն առցանց հարթակում	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ օպերատոր	
19	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումներ, քննարկումներ	Դպրոցի հեռանկարային ծրագրերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորություն	Տարվա ընթացքում	Դպրոցի խորհուրդ Տնօրեն	
20	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը	Տարվա ընթացքում	Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ տնօրեն	
21	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Ավելի բարեկարգ միջավայր ստեղծելու համար	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
22	Տիպային նոր մասնաշենքի կառուցում՝ ըստ անհրաժեշտության	Ունենալ տիպային դպրոց, որը կրթության որակը կհանգեցնի նոր որակի և դպրոցը կազատի բազմաթիվ խնդիրներից՝ կապված 2-րդ մասնաշենքի	2023-2028թթ	Տնօրեն Մարզպատարանի համապատասխան ներկայացուցիչ	

		հարմարեցված լինելու հետ			
23	Տարրական դպրոցի շենքային համարժեք պայմանների ստեղծում	Տարրական դասարանները դպրոցի հիմքն են, և ակնկալում ենք առավել արդյունավետ գիտելիքների յուրացում	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	
24	2-րդ մասնաշենքի բնակիչների տեղափոխություն և տարածքների նպատակային օգտագործում	Ավելի բարեկարգ և սենյակների նպատակային օգտագործում	2023-2026թթ	Տնօրեն Մարզպետարանի և համայնքապետարանի համապատասխան ներկայացուցիչ	
25	2-րդ մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում,դասասենյակների հին պատուհանների փոխարինում նորով	Ավելի բարեկարգ և տաք դասասենյակներում դասապրոցեսի կազմակերպում	2023-2025թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
26	Դպրոցում ունենալ բուֆետ	Ուսուցիչները և աշակերտները կսնվեն դպրոցում	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	
27	Ճաշարանի սեղան-աթոռների փոխարինում նորով և ջեռուցման համակարգի անցկացում	Միջավայրի և պայմանների բարելավում	2023-2025թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
28	Ջերմոցի առավել արդյունավետ օգտագործում	<<Կայուն դպրոցական սնունդ >> ծրագրի շրջանակներում տարրական դասարանների աշակերտներին անհրաժեշտ ջերմոցային բույսերով ապահովում	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Ջերմոցի աշխատակից	
29	Թաքստոցի հիմնանորոգում	Անհրաժեշտության դեպքում ունենալ տարհանման տեղ	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Զինղեկ	
30	Դպրոցի բակի բարեկարգում և ասֆալտապատում	Գեղագիտական ճաշակի բարձրացում	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
31	Մեթոդկաբինետների, հանդիսությունների դահլիճի,հանդերձարանների վերանորոգում	Հարմարավետ պայմաններ ստեղծել աշխատողների համար	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
32	Գրատախտակների փոխարինում որակյալ նորով	Ուսման գործընթացը ավելի արդյունավետ դարձնել	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող հաշվապահ	
33	Մարզադաշտի արհեստական կանաչապատում	Ավելի մաքուր ու հարմարավետ լինելու նպատակով	2023-2028թթ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող ֆիզղեկ	

Պատասխանատուները.

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման պատասխանատուներն են Դպրոցի կլառավարման խորհուրդը, տնօրենը, փոխտնօրենները, մեթոդմիավորման նախագահները, ուսուցիչները, դասղեկները, լաբորատորիայի վարիչը, գրադարանի վարիչը, տնտեսվարը, համայնքապետարանը, վարչատնտեսական ղեկավարը, որոնց ճիշտ և փոխհամագործակցված աշխատանքի արդյունքում դպրոցը կունենա ցանկալի և տեսանելի արդյունք: Օղակները պետք է աշխատեն համաձայնեցված՝ լրացնելով միմյանց: Միայն այդ ժամանակ աշխատանքը տեսանելի կլինի և ժամանակային առումով իրատեսական: Անհրաժեշտության դեպքում հաստատության գործունեության մեջ կատարվող և հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունների հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները:

6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

6.1 Սահմանված են յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող գնահատման չափանիշները: Գնահատումները կատարել հետևյալ սկզբունքներով.

ա)Եթե նախատեսված բոլոր աշխատանքները կատարված են լիարժեք , ունենք նախատեսված արդյունք , ապա գնահատել գերազանց: (5):

բ)Եթե նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են, բայց կան թեթևակի թերություններ, ոչ լիարժեք արդյունք , ապա գն ահատել լավ (4):

գ)Եթե նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի թերություններով, որոշ գործողություններ չեն կատարվել, թերի արդյունք, ապա գնահատել բավարար (3):

դ) Եթե նախատեսված աշխատանքները կատարվել են թերություններով , կիսատ-պռատ, արդյունքները տեսանելի չեն, գնահատել անբավարար (2):

ե) Եթե նախատեսված աշխատանքներից համատարած ոչինչ չի կատարվել և չունենք արդյունք, ապա գնահատել վատ(1):

6.2 Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատաքների ազդեցության չափանիշները

Դպրոցում առկա է ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա դպրոցի ուսումնական պլանը:

Կատարված է ըստ ուս.պլանի դասաբաշխում՝ օրենքի սահմաններում: Բոլոր առարկաների համար համապատասխան ուսուցիչների կողմից կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափանիշներին և ծրագրերին համապատասխան:

Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է լինեն չափելի ըստ չափորոշիչների պահանջի: Աշակերտների առաջադիմությունը և հաջողությունները պետք է գնահատվեն չափորոշչի պահանջներին համահունչ:

Հաճախակի տնօրենը, ուսմասվարը, մեթոդմիավորման նախագահները պետք է կատարեն դասալսումներ՝ստուգելով դասավանդման որակը, տնային առաջադրանքները, գրավոր աշխատանքները, ուսումնական պլանների կատարման ընթացքը, չափորոշչի պահանջներին համապատասխանությունը:

Կատարել առարկաների դասավանդման դրվածքների ուսումնասիրություն: Գրավոր աշխատանքների միջոցով հաճախակի ստուգել աշակերտների մնացորդային գիտելիքները, կազմել յուրաքանչյուրի համար տեղեկագիր և պարբերաբար քննարկել մեթոդմիավորման նիստում, անհրաժեշտության դեպքում՝ ծնողների հետ և դասարանային ժողովներում՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով: Ակտիվացնել աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, վիկտորինաներին, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին: Դասապրոցեսին, հնարավորության սահմաններում , առավել շատ օգտագործել նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային ռեսուրսներ, լրացուցիչ տեղեկատվություն: Շատ կարևոր է աշակերտներին յուրաքանչյուր առաջընթացի համար ոգևորել և իրավիճակից կախված՝ արժանացնել խրախուսանքների: Դրանք կարող են լինել գովասանքի խոսք, պատվոգիր, ծնողին շնորհակալություն հայտնելու միջոցով, դրամական պարգև և այլ ձևերով:

Ուսումնական առաջընթաց չարձանագրած աշակերտների հետ տանել անհատական աշխատանք , երբեք չի կարելի փնովել, վարկաբեկել մանավանդ մյուս աշակերտների ներկայությամբ, այլ պետք է անընդհատ ոգևորել և կանգնեցնել ճիշտ ուղու վրա:Ցանկացած ուսումնական գործընթացից հետո անհրաժեշտ է կատարել վերլուծություն և որոշել հետագա անելիքները:

6.3 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքների միջավայրի գնահատման չափանիշներ

2013-2014 ուստարվանից դպրոցը իրականացնում է ներառական կրթություն: Վերջին 3 տարիներին դպրոցում սովորում են 13 ԿԱՊԿՈՒ աշակերտներ:

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում նաև հատուկ կարիքներ և սահմանափակ հնարավորություններ ունեցող կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է բացառումը կրթությունից: Այն ընդգրկում է փոփոխություններ և բարեփոխումներ բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում,

տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա և հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է:

Դպրոցում ստեղծվել է համապատասխան հոգեբանական և ֆիզիկական միջավայր ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրումը ուսուցիչների, աշակերտների և հասարակության ապահովելու համար:

Դպրոցում աշխատում են մեկ հատուկ մանկավարժ և չորս ուսուցչի օգնական, որոնց ամենօրյա ուշադրության կենտրոնում են ներառված աշակերտները:

ԿԱՊԿՈՒ բոլոր աշակերտները մյուս բոլոր աշակերտների նման ապահովված են դասագրքերով, ուսումնաօժանդակ նյութերով և անհրաժեշտ այլ պարագաներով: Մշտապես լսելի է բոլորի կարծիքները, այդ թվում ԿԱՊԿՈՒ աշակերտների և նրանց ծնողների: Յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի համար դասավանդող ուսուցիչների կողմից աջակցման կենտրոնի, ծնողի և շահառու խմբերի հետ համատեղ կազմվում են բոլոր առարկաների համար ԱՈՒՊ-ներ:

Որոշումներ կայացնելիս մշտապես ընգրկել բոլոր շահագրգիռ կողմերին՝ ծնողներ, սովորողներ, ուսուցիչներ, համայնքի ներկայացուցիչներ, քննարկումները անցկացնել թափանցիկ և ազատ՝ հաշվի առնելով բոլորի կարծիքները: Պարբերաբար կատարել արդյունքների քննարկում և որոշել հետագա անելիքները:

6.4 Սահմանել աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման չափորոշիչներ

Դպրոցի անձնակազմի համար պետք է ստեղծել օժանդակ և արդյունավետ ուսումնական միջավայր:

Դպրոցը կրթական բարեփոխումներին ճիշտ և համակողմանիորեն կարձագանքի , եթե ունենա ձեռնհաս, արհեստավարժ մանկավարժներ, աշխատակիցներ: Խրախուսման և ինքնակրթության միջավայրը կարող է խթանել դպրոցի անձնակազմի մասնագիտական աճը, բարձրացնել արդյունավետությունը:

Ինչպես խրախուսել և արժևորել դպրոցի անձնակազմին.

ա. իրականացնել անձնակազմի կատարողականի պարբերական գնահատումներ՝ արձանագրելու նրանց մասնագիտական գործունեության արդյունավետությունը.

բ. ստեղծել տարբեր վերապատրաստման հնարավորություններ՝ սեմինարներ, վեբինարներ, առցանց դասընթացներ, այնուհետև գնահատել անձնակազմի անդամների վերապատրաստման արդյունքում ձեռք բերված կարողունակությունների կիրառականությունը մասնագիտական աշխատանքում,

գ. հրապարակել անձնակազմի ձեռքբերումները, խրախուսել նրանց մրցանակներով, պատվոգրերով, երախտագիտության միջոցառումներվ, դրամական միջոցներով.

դ. հնարավորություն ստեղծել ներգրավվելու տեղական և միջազգային տարբեր ծրագրերի՝ դրանով ապահովելու մասնագիտական կատարելագործման հնարավորությունները, առաջխաղացման ուղիները.

ե. գնահատել վերապատրաստման ազդեցություն սովորողների ուսումնառության արդյունավետության վրա վերջնարդյունքների ապահովման բարելավում, սովորողների ներգրավածության բարձրացում, դասարանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում:

6.5 Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշները:

Դպրոցի նպատակների և խնդիրների, ուսուցման որակը բարելավելու, ուսման առաջադիմությունը բարձրացնելու համար շատ կարևոր է մշտական համագործակցություն համայնքի, ծնողների, գործընկերների հետ:

ա) Ծնողական խորհուրդը և ծնողները ամենօրյա կապի մեջ պետք է լինեն իրենց երեխաներին դասավանդող ուսուցիչների հետ: Դա կարող է լինել ծնողական ժողովների, էլեկտրոնային և առցանց այլ միջոցներով:

բ) Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը, աշխատանքներին, որոշումներ կայացնելու, արդյունքները գնահատելու գործընթացներին:

գ) Արձանագրել ծնողների կողմից արված առաջարկությունները, կարծիքները, վերաբերմունքները, մտահոգությունները և հաշվի առնել հետագա գործունեության ժամանակ:

դ) Դպրոցը՝ որպես համայնքի մի մաս, պետք է ներգրավված լինի համայնքային ծրագրերի, նախագծերի և այլ միջոցառումների:

ե) Համագործակցել այնպիսի շահառու կազմակերպությունների հետ , որոնք, առանց միջամտելու դպրոցի գործունեությանը, կմեծացնեն աշակերտների կրթական հնարավորություններն ու որակը:

զ) Գնահատել համագործակցության արդյունքները և որոշել հետագա քայլերը:

է) Դպրոցում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ համագործակցելով ծնողների հետ, դպրոցի միջոցների հաշվին:

թ)Անհրաժեշտության դեպքում կազմակերպել այլ աշակերտների համար երկարօրյա ուսուցում ծնողների, համայնքի կամ այլ շահագրգիռ կազմակերպությունների միջոցների հաշվին:

Թվարկած գործողությունները կատարելու համար շատ կարևոր է ծնողների, համայնքի, շահառու կազմակերպությունների հետևողական և սրտացավ վերաբերմունքը արդյունքների գնահատման, վերլուծության և հետագա անելիքների որոշման գործում:

6.6 Սահմանված են հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

Դպրոցում կրթությունը իրականցվում է ժողովրդավարության պայմաններում, բռնության և հալածանքի դեպքերը բացառված են, մշտապես տարվում են բացատրական աշխատանքներ (դասղեկ, հոգեբան, հատուկ մանկավարժ):

Դպրոցական անվտանգ և ներառական միջավայրը կարող է ապահովել նաև բուլինգի կանխարգելման գնահատման չափանիշների համակարգը: Անհրաժեշտ է մշակել կանխարգելման միջոցառումներ, գնահատել կանխարգելման ծրագրերի և նախաձեռնությունների արդյունավետությունը, որոնք խթանում են դրական վարքագիծը, կարեկցանք և հարգանք սովորողների շրջանում, գնահատել միջադեպերին արագ արձագանքելու արդյունավետությունը՝ համոզվելով, որ համապատասխան աջակցություն է ցուցաբերվում ժամանակին, պահպանել գաղտնիությունը, ապահովել գործընթացին ներգրավված անձանց անվտանգությունը: Առհասարակ դպրոցական բռնության դեմ պայքարը ընթանում է մի քանի ուղղություններով, որոնց մեջ ընդգրկված են ինչպես ընդհանուր (հանդուրժողականության պրոպագանդա, հասարակության մշակութային մակարդակի բարձրացում), այնպես էլ անհատական (աշխատանք ընտանիքների հետ, հասակակիցների նկատմամբ ագրեսիա դրսևորած երեխաների հոգեբանական օգնություն) մեթոդներ: Կիրառելով այս մեթոդները՝ դպրոցները կարող են անդրադառնալ ահաբեկմանը, բռնությանը և ճգնաժամային իրավիճակներին, որը և խրախուսում է հարգանքի, կարեկցանքի և անվտանգության մշակույթը:

7.Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները.

Ռիսկերը ցանկացած ծրագրի իրականցմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի և անսպասելի գործոններն են: Ցանկացած ծրագիր կամ ձեռնարկված գործողություն կապված է մի

շարք ռիսկերի հետ, ուստի դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն էլ ունի իր ռիսկային գործոնները, որոնք կարող են ինչ-որ կերպ խանգարել դպրոցի զարգացման ծրագրում նախատեսված նպատակների իրականացմանը,օրինակ՝ տարերային աղետները, ֆորսմաժորային իրավիճակները, պատերազմները, իրավական հնարավոր կարգավորումների բացակայությունը, դպրոցի ֆինանսավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել ֆինանսական միջոցների նվազման և այլն:Ստորև ներկայացնենք զարգացման ծրագրի հետ կապված ռիսկերը, մեղմացման կամ չեղարկման գործընթացները:

No	Միջոցառում/ գործողություն	Ռիսկեր	Ռիսկերի մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ
1	Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում	Առաջավոր փորձի բացակայություն	Հորդորել ուսուցիչներին մասնակցել կամավոր ատեստավորման և առաջավոր փորձի ձեռքբերման
2	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում ատեստավորման	Ֆինանսական միջոցների բացակայություն	Դիմել դոնոր կազմակերպությունների
3	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ ուսուցիչների համար	Նոր սենրնդի համակարգիչների պակաս	Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ
4	Դաստիարակչական աշխատանքներ՝հիմնված դաստեկական պլանների վրա	Ծնողների պասիվություն	Ծնողների հետ բացատրական աշխատանքների ակտիվացում
5	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Աշակերտների հաճախակի բացակայություն	Համատեղ աշխատանք աջակցման կենտրոնի ՍՏՄԱԿ-ի հետ
6	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Ֆինանսական միջոցների սակավություն	Միջոցների ներգրավում այլ աղբյուրներից
7	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Մշակութային օջախների և դպրոցի պասիվությունը	Կատարել բացատրական աշխատանքներ՝ ուղղված համագործակցման ակտիվացմանը
8	Ուսումնադաստիարակչականի գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարակայական ուսուցիչների հետ	Ծնողների ակտիվության պակաս	Ավելի հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, տանել բացատրական աշխատանքներ հաճախակի բացակայած ծնողների հետ
9	Ռազմահայրենասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Ռիսկեր չեմ տեսնում	Լինել հետևողական, որպեսզի ռիսկեր չառաջանան
10	Առողջ ապրելակերպին սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումներին սպորտլանդիաների կազմակերպում	Համապատասխան գույքի և մոտիվացման պակաս	Լինել հաստատակամ միջոցառումների կազմակերպման հարցերում
11	<<Թումո>> տուփի բացում	Դիմումի մերժում կազմակերպության կողմից	Հաստատակամություն գործին ճիշտ ուղղություն տալու համար
12	Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը	Ֆինանսական միջոցների սակավություն	Ներգրավում այլ աղբյուրներից
13	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	Ֆինանսական միջոցների սակավություն	Դիմել դոնոր կազմակերպությունների
14	Գեղագիտական խմբակների հիմնում	Ծրագրերի ոչ ճիշտ ներկայացում	Ծրագրերը համապատասխանեցնել օրենքով սահմանված նորմերին

15	Սպորտդահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում	Ֆինանսական միջոցների սակավություն	Դիմել բարեգործական կազմակերպություններին
16	Ուս.հաստատության կանաչ տարածքների բարեկարգում	Աշխատանքի պասիվություն	Ներգրավել աշակերտական խորհրդին
17	Հոգեբանի և ուսուցչի օգնականների արդյունավետ աշխատանքի ապահովում	Համապատասխան միջավայրի և որակավորման պակաս	Ստեղծել ուսումնական միջավայր և խթանել հոգեբանի և ուսուցչի օգնականների վերապատրաստմանը
18	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնային փաթեթի	Աշխատանքի ոչ բավարար մակարդակի տիրապետում փաստաթղթաշրջանառությանը	Կազմակերպել հատուկ դասընթացներ համապատասխան գործողություններ կատարելու ուղղությամբ
19	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման մասին հանդիպումներ, քննարկումներ	Համապատասխան օղակներին թերհավատություն և պասիվություն	Տանել բացատրական աշխատանքներ հեռանկարային ծրագրերի կարևորության մասին
20	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Խորհրդի անդամների ոչ կոմպետենտ լինելը	Հաճախակին հիշեցնել խորհրդի բոլոր անդամներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին
21	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Աշխատանք կատարողների պակաս	Ներգրավել աշակերտներին և ծնողներին
22	Տիպային նոր մասնաշենքի կառուցում՝ ըստ անհրաժեշտության	Դիմումի մերժում	Հետևողական և բացատրական աշխատանք տանել անհրաժեշտության դեպքում
23	Տարրական դպրոցի շենքային համարժեք պայմանների ստեղծում	Ֆինանսական միջոցների սակավություն	Հնարավորության սահմաններում օգտագործել դպրոցի այլ աղբյուրներից ստացված եկամուտներ
24	2-րդ մասնաշենքի բնակիչների տեղափոխություն և տարածքների նպատակային օգտագործում	Բնակիչները չեն ցանկանում տեղափոխվել	Տանել բացատրական աշխատանքներ, հարցի կարգավորման նպատակով դիմել վերադաս և իրավասու մարմիններին
25	2-րդ մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում,դասասենյակների հին պատուհանների փոխարինում նորով	Ֆինանսական միջոցների սակավություն	Դիմել շահագրգիռ մարմիններին
26	Դպրոցում ունենալ բուֆետ	Դիմող կազմակերպությունների բացակայություն	Տանել բացատրական աշխատանքների ԱՁ-ների շրջանում
27	Ճաշարանի սեղան-աթոռների փոխարինում նորով և ջեռուցման համակարգի անցկացում	Ֆինանսական միջոցների սակավություն	Փորձել ներգրավել այլ կազմակերպությունների
28	Թաքստոցի հիմնանորոգում	Ֆինանսական միջոցների սակավություն	Օգտագործել դպրոցի հնարավորությունները
29	Դպրոցի բակի բարեկարգում և ասֆալտապատում	Աշխատանքները կատարողների բացակայություն	Դիմել բարեգործական հիմնադրամներին
30	Մեթոդկաբինետների, հանդիսությունների դահլիճի, հանդերձարանների վերանորոգում	Ֆինանսական միջոցների սակավություն	Օգտագործել դպրոցի այլ աղբյուրներից ստացված եկամուտները
31	Գրատախտակների փոխարինում որակյալ նորով	Ֆինանսական միջոցների սակավություն	Փորձել ներգրավել այլ կազմակերպությունների
32	Մարզադաշտի արհեստական կանաչապատում	Ֆինանսական միջոցների սակավություն	Փորձել ներգրավել այլ կազմակերպությունների

8.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազան

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	*Ֆինանսական միջոցները և նյութատեխնիկական պարագաներ*	Նշում ներ
1	Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում	Դասի ավելի արդյունավետ կազմակերպում,նոր մեթոդների, տեխնոլոգիաների օգտագործում դասապրոցեսում, աշակերտների ակտիվացման և ձգտման ավելացում	2023-2028թթ	Օգտագործվում են դպրոցի բյուջետային միջոցները, հնարավորության դեպքերում այլ աղբյուրներից, նյութատեխնիկական բազան, համակարգչային տեխնիկան , լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ և այլն:Կատարում են փորձառու, կամավոր ատեստավորում անցած և ակտիվ ուսուցիչների օգնությամբ: Պարբերաբար կատարել դասալսումներ և բաց դասեր	
2	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում ատեստավորման	Սկսնակ ուսուցիչների ակտիվ ներգրավումը դասապրոցեսին, ինքնակրթության ձգտում, ժամանակակից մեթոդների օգտագործում, կրթության որակի բարձրացում	Տարվա ընթացքում	Ֆինանսավորվում է դպրոցի բյուջեի հաշվին, մեթոդմիավորումների աջակցությամբ, օգտագործվում է դպրոցի նյութատեխնիկական բազան, անհրաժեշտության դեպքում հայթայթել այլ միջոցներ:	
3	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ ուսուցիչների համար	Ուսուցիչների համակարգչային գիտելիքների ավելացում,ՏՀՏ-ների առավել օգտագործում, աշակերտների համար հետաքրքիր դասապրոցեսի կազմակերպում	2023-2026թթ	Կատարվում է դպրոցի ֆինանսական և նյութատեխնիկական բազայի միջոցով, օգտագործ վում են ունեցած բոլոր հնարավորությունները, համակարգչային դասարանները, լաբորատորիան, վարում է ինֆորմատիկայի ուսուցիչը, ահնրաժեշտության դեպքում հրավիրել այլ մասնագետներ	
4	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա	Դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացում, ծնող-դպրոց կապի ամրապնդում, իրազեկման և թափանցիկ աշխատանքի կազմակերպում, աշակերտների զգոնության ավելացում	2023-2028թթ	Լրացուցիչ ֆինանսներ և ծախսեր պետք չեն, իրականացնում են դասղեկները, տնօրենի, ՄԿԱ գծով փոխտնօրենի վերահսկողությամբ:	
5	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Դասապրոցեսին ավելի հեշտ ինտեգրում:Ուսուցման պրոցեսի կատարելագործում և ուսուցման որակի բարձրացում	Տարվա ընթացքում	Իրականացնում է հատուկ մանկավարժը դասղեկի և ուսուցչի օգնականների հետ: Անհրաժեշտության դեպքում դիմել աջակցության կենտրոն, եթե դպրոցի միջոցները և	

				բյուջեն բավարար չեն:	
6	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Մշակութային ինտելեկտի զարգացում, աշակերտների աշխարհայացքի ձևավորում,մասնագիտական կողմնորոշման խթանում	Տարվա ընթացքում	Կազմակերպում են փոխտնօրենները, ԴԱԿ-ը և դասղեկները, վերահսկում է տնօրենը	
7	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Արվեստի և մշակույթի տարբեր ճյուղերի ընկալում,աշխարհայացքի ձևավորում, որպես ապագա քաղաքացու ձևավորում,ավելի խոր և մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքի պայմաններին և նրանց ստեղծագործություններին	2023-2028թթ	Կազմակերպում է տնօրենը ՄԿԱ գծով փոխտնօրենի, ծնողների և դասղեկների հետ համատեղ	
8	Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարկայական ուսուցիչների հետ	Ուսուցիչ- ծնող, ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթության որակի բարձրացում, ուսուցիչների, ծնողների և աշակերտների պատասխանատվության բարձրացում	2023-2028թթ	Կազմակերպում է ՄԿԱ գծով փոխտնօրենը, դասղեկները և առարկայական ուսուցիչները՝տնօրենի վերահսկողությամբ	
9	Ռազմահայրենասիրական մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Աշակերտների մոտ հայրենիքի և պետականության հանդեպ պատասխանատվության և հարգանքի ամրապնդում, արվեստի կարևորության ընկալում	2023-2028թթ	Կազմակերպում է զինղեկը ,ՄԿԱ գծով տեղակալը ,ԴԱԿ-ը և պատմության ուսուցիչները դպրոցի հնարավորություններով ,	
10	Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում	Աշակերտի մոտ առողջ ապրելակերպի , սպորտի կարևորության գնահատում, ֆիզիկապես առողջ մարդու մոտ շատ ավելի բարձր է հոգու առողջությունը:	2023-2028թթ	Կազմակերպվում է դպրոցի միջոցներով , ֆիզկուլտուրայի ուսուցիչների, զինղեկի և ԴԱԿ-ի հետ համատեղ, տնօրենի վերահսկողությամբ	
11	<<Թումո>> տուփի բացում	Նոր հնարավորություններ աշակերտների մասնագիտական կողմնորոշման, ինտելեկտի զարգացման համար	2024-2025թթ	Հետևողական դիմել համապատասխան կազմակերպությանը, առաջարկել դպրոցի ունեցած հնարավորությունները, հայթայթել այլ միջոցներ	
12	Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը	Ավելի հեշտ կհաղթահարեն իրենց կարիքները, կստեղծվի առավել ապահով միջավայր ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար և կունենանք ուսումնական որակի բարձրացում	2023-2024թթ	Կօգտագործվի դպրոցի ֆինանսական միջոցները,անհրաժեշտության դեպքում կներգրավվեն դոնոր կազմակերպություններ: Աշխատանքները կկատարվեն դպրոցի վարչատնտեսական մասի օժանդակությամբ	
13	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	Պրակտիկ և տեսական դասերի համատեղում ՏՀՏ հմտությունների զարգացում և՛աշակերտների և՛ուսուցիչների համար:Բաց դասերի անցկացում և քննարկում:Ձևական մեթոդների արդյունավետ կիրառում:	2023-2026թթ	Դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին, մրցութային եղանակով , ներգրավելով բարեգործական միջոցներ:	

14	Գեղագիտական խմբակների հիմնում	Գեղեցիկի մասին պատկերացումներ ստեղծելու և աշխարհը գեղեցիկ ընկալելու հնարավորություն: Գեղագիտական խմբակների հիմնում, մտավոր կարողություններով աչքի ընկնող աշակերտների ներգրավվածություն գեղագիտական խմբակներում, նրանց հմտությունների դրսևորում և զարգացում:Գեղագիտական խմբակների ստեղծած նյութերի , իրերի կիրառում համապատասխան առարկաների դասաժամերի (երկրաչափական պատկերներ, գրողների դիմանկարներ, բնանկարներ և այլն)	2024-2025թթ	ՄԿԱ գծով տեղակալի և ԴԱԿ-ի օժանդակությամբ, խմբակավարների աջակցությամբ, դպրոցի միջոցներով և նյութատեխնիկական բազայի միջոցով	
15	Սպորտդահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում	Ավելի հետաքրքիր և բովանդակալից դասի կազմակերպում, սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ: Աշակերտների ֆիզիկական զարգացվածության և առողջ ապրելակերպի ապահովում ,մասնակցություն ներդպրոցական և արտադպրոցական մարզական տարբեր մրցումների , ներդպրոցական սպորտլանդիաների կազմակերպում, որը կխթանի առողջ ապրելակերպը:Ինչու՞ չէ՝ ուսուցիչների ազատ ժամանակի անցկացում մարզասարքերով հագեցած դահլիճում:	2023-2025թթ	Դպրոցի միջոցներից օգտվելով , ինչպես նաև բարեգործական հիմնադրամներին դիմելու միջոցով, վարչատնտեսական աշխատակիցների աջակցությամբ	
16	Ուս. հաստատության կանաչ տարածքների բարեկարգում	Երեխաների մոտ հոգատարության և շրջապատի հանդեպ հետաքրքրասիրության ավելացում: Աշակերտների մեջ բնապահպանական գիտելիքների սերմանում,աշխատասիրության ինքնագնահատում և գնահատում,գեղագիտական ճաշակի ձևավորում և զարգացում, համապատասխան առարկաների բաց դասերի անցկացում, մաքուր տարածք ունենալու գաղափարի արժևորում:	2023-2028թթ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում, գործողությունը կկատարվի դպրոցի ուսումնաօժանդակ աշխատակիցների, աշակերտների անմիջական մասնակցությամբ, տնօրենի հսկողությամբ	
17	Հոգեբանների և ուսուցչի օգնականների արդյունավետ աշխատանքի ապահովում	Ներգրավվածության աստիճանի բարձրացում: Աջակցություն ուսուցիչներին , հոգեբանի և ուս. օգնականների կատարած աշխատանքների շնորհիվ ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավվածություն միջոցառումներին ,աշակերտների ինքնավստահության բարձրացում:	2023-2028թթ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում: Դպրոցի նյութատեխնիկական բազայի միջոցով , ուսուցչի օգնականների, հոգեբանի և ՍՏՄԱԿի աջակցությամբ	

18	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնային փաթեթի	Դպրոցի գործունեության հասանելիություն և թափանցիկություն առցանց հարթակում: Դպրոցի փաստաթղթերի պահպանման առավել հասանելի և ապահով տարբերակ, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում	2023-2028թթ	Կկատարեն հաշվապահի և օպերատորի միջոցով, ինչպես նաև բանիմաց ուսուցիչները:Կօգտագործվի դպրոցի համակարգչային տեխնիկան տնօրենության վերահսկողությամբ: Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	
19	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումներ, քննարկումներ	Դպրոցի հեռանկարային ծրագրերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորություն, փոխհամագործակցության խթանում: Մտքերի փոխանակման արդյունքում լավագույն ծրագրերի կազմում:	Տարվա ընթացքում	Դպրոցի տնօրենի ,ծնողական խորհրդի շահագրգիռ կազմակերպությունների աշխատակիցների հետ : Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	
20	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը: Հնարավորինս տեղյակ լինել դպրոցում կայացվող իրադարձություններին, ծավալվող գործունեությանը: Նիստերի ժամանակին գումարում և հրատապ հարցերի քննարկում:Աշակերտների և մանկավարժական կոլեկտիվի կողմից տեսանելի լինի խորհրդի դերը դպրոցի գործունեության մեջ:	Տարվա ընթացքում	Հանդիպումներ խորհրդի անդամների, ծնողների և մանկավարժների հետ:Կատարել արդյունքների վերլուծություն	
21	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Աշակերտի կրթության համար բարեկարգ տարածքի առկայություն:Գեղեցիկ և անվտանգ միջավայրի մշտական ապահովվածություն	2023-2028թթ	Դպրոցի ֆինանսական միջոցներով, ծնողների և աշխատակիցների օգնությամբ	
22	Տիպային նոր մասնաշենքի կառուցում, ըստ անհրաժեշտության	Ունենալ տիպային դպրոց, որը կրթությանը կհանգեցնի նոր որակի և դպրոցը կազատի բազմաթիվ խնդիրներից՝ կապված 2-րդ մասնաշենքի հարմարեցված լինելու հետ:Տիպային մասնաշենքը կնպաստի նաև կրթության որակի բարձրացմանը:Դպրոցը չի ունենա շենքային խնդիրներ աշակերտների տեղաբաշխվածության հետ կապված:Աշակերտներն ավելի կկենտրոնանան ուսման վրա, քանի որ շենքային անհարմարություններ չեն նկատի	2023-2028թթ	Դիմել մարզպետարան և լինել հետևողական , որպեսզի նոր մասնաշենքի կառուցումը ներառվի դպրոցաշինության կառավարության ծրագրերի մեջ	
23	Տարրական դպրոցի շենքային համարժեք պայմանների ստեղծում	Տարրական դասարանները դպրոցի հիմքն են, և ակնկալում ենք առավել արդյունավետ գիտելիքների յուրացում :Ցանկալի է տարրական դպրոցի աշակերտները մեկ մասնաշենքում	2023-2028թթ	Դպրոցի ֆինանսական և նյութատրեխնիկական միջոցների հաշվին վարչատնտեսական աշխատակիցների, ուսուցիչների և ծնողների	

		սովորեն՝ շենքային համապատասխան պայմանների առկայությամբ։Տարրական դպրոցի ուսուցիչների մշտական համագործակցության արդյունքում առավել հիմնավոր կրթության ապահովում։Տարրական դպրոցի աշակերտը չպետք է հանդիպի շենքային անհարմարությունների։		օժանդակությամբ	
24	2-րդ մասնաշենքի բնակիչների տեղափոխություն և տարածքների նպատակային օգտագործում	Ավելի բարեկարգ սենյակների նպատակային օգտագործում։Օրենքի սահմաններում բնակիչների հնարավորինս շուտ տեղափոխություն։Կբարեկարգվեն սենյակները և կօգտագործվեն ըստ աշակերտների կրթական կարիքների։	2023-2026թթ	Դիմել մարզպետարան , համայնքապետարան, բացատրել իրավիճակը,լինել հետևողական	
25	2-րդ մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում,դասասենյակների հին պատուհանների փոխարինում նորով	Ավելի բարեկարգ և տաք դասասենյակներում դասապրոցեսի կազմակերպում։Աշակերտների կողմից անհարմարություններ չեն ստեղծվի սանհանգույցներից օգտվելիս։Բարեկարգ սանհանգույցը ավելի էսթետիկ միջավայր է սովորողի համար։Պատուհանների վերանորոգումը հիմք է տաք դասասենյակի , և դասապրոցեսը ավելի արդյունավետ կընթանա։	2023-2025թթ	Դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին, վարչատնտեսական աշխատողների օգնությամբ, անհրաժեշտության դեպքում դիմել շահագրգիռ անձանց և կազմակերպություններին	
26	Դպրոցում ունենալ բուֆետ	Ուսուցիչները և աշակերտները կսնվեն դպրոցում։Աշակերտները պատճառ չեն ունենա դասամիջոցներին դպրոցի տարածքից դուրս գալու։Դպրոցի բուֆետը կտրամադրի ավելի օգտակար և աշակերտին համապատասխան սնունդ։Աշակերտը ստիպված չի լինի գնել առողջությանը ոչ հարիր սնունդ՝ չիպսեր, գազավորված ըմպելիք։Վերահսկողություն կլինի աշակերտի օգտակար սնվելու գործընթացին։	2023-2028թթ	Դիմել շահագրգիռ կազմակերպություններին, անհատ ձեռներեցներին	
27	Ճաշարանի սեղան-աթոռների փոխարինում նորով և ջեռուցման համակարգի անցկացում	Միջավայրի և պայմանների բարելավում։Սեղանաթոռների փոխարինում նորով,ավելի ապահով է և հարմարավետ;Գեղեցիկ միջավայրի ստեղծում։Ջեռուցման համակարգի անցկացումը կնպաստի ճաշարանում աշակերտի հաճույքով սնվելուն։	2023-2025թթ	Ջերմոցից և արևային վահանակներից ստացված շահույթի հաշվին , վարչատնտեսական աշխատակիցների օգնությամբ։	
28	Ջերմոցի առավել արդյունավետ օգտագործում	<<Կայուն դպրոցական սնունդ >> ծրագրի շրջանակներում տարրական դասարանների աշակերտներին անհրաժեշտ	2023-2028թթ	Տնօրենության վերահսկողությամբ,վարչատնտեսական, ջերմոցի և ճաշարանի աշխատակիցների	

		ջերմոցային բույսերով ապահովում: Բնագիտական դասաժամերի անցկացում ջերմոցում: Աշակերտներին երբեմներբեմն ծանոթացնել ջերմոցային աշխատանքներին՝ աշխատասիրության և աշխատանքային դաստիարակության նպատակով:		օժանդակությամբ :Ներգրավել են նաև ծնողներին:	
29	Թաքստոցի հիմնանորոգում	Անհրաժեշտության դեպքում ունենալ տարհանման տեղ: Կարևորագույն վայր լինելով հանդերձ պետք է լինի բարեկարգ՝ անհրաժեշտության դեպքում նպատակին ծառայելու համար:	2023-2028թթ	Բարեգործական կազմակերպությունների ֆինանսական միջոցների ներդրմամբ,վարչատնտեսական աշխատակիցների օգնությամբ,աշխատանքներին ներգրավել նաև ծնողներին	
30	Դպրոցի բակի բարեկարգում և ասֆալտապատում	Գեղագիտական ճաշակի բարձրացում;Ապահով և անվտանգ տեղաշարժ:Բարեկարգ միջավայրի ապահովում:Բաց դասերի բացօթյա կազմակերպում , դասմիջոցներին աշակերտների հանգստի անցկացման գեղեցիկ միջավայր:	2023 2028թթ	Բարեգործական կազմակերպությունների ֆինանսական ,իջոցներով, վարչատնտեսական աշխատակիցների օգնությամբ ներգրավել են նաև աշակերտներին	
31	Մեթոդկաբինետների, հանդիսությունների դահլիճի,հանդերձարանների վերանորոգում	Մեթոդմիավորումների նիստերի հարմարավետ անցկացում:Օգտագործել թղթավարությունների , թղթապանակների պատշաճ տեղակայում մեթոդկաբինետներում:Հանդիսությունների դահլիճում անցկացվող միջոցառումների քանակի և որակի բարձրացում:Ընդունելությունների, ժողովների համար հարմարավետության առկայություն:Հանդերձարաններում աշակերտները կունենան հարմարավետ պայմաններ իրենց իրերի համար և չեն խուսափի պարապմունքներից: Հարմարավետ պայմաններ ստեղծել աշխատողների համար	2023-2028թթ	Դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին, վարչատնտեսական աշխատողների օգնությամբ, մեթոդմիավորումների մասնակցությամբ	
32	Գրատախտակների փոխարինում որակյալ նորով	Ուսման գործընթացը ավելի արդյունավետ դարձնել:Աշակերտների կրթության որակի բարձրացում:Անհարմարությունների վերացում:Գեղագիտական ճաշակի բարձրացում:	2023-2028թթ	Դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին ,վարչատնտեսական աշխատակիցների օգնությամբ,դասղեկների մասնակցությամբ	
33	Մարզադաշտի արհեստական կանաչապատում	Ավելի մաքուր ու հարմարավետ լինելու նպատակով մաքուր տարածք, գեղեցիկ և ճաշակով տարածք,որը կհանդիսանա մարզական հաջողությունների գրավականը:	2023-2028թթ	Բարեգործական կազմակերպությունների միջոցներով,վարչատնտեսական ն ն աշխատակիցների օգնությամբ,ֆիզկուլտուրայի ուսուցչի մասնակցությամբ:	

9.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Դպրոցի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է , որով պետք է առաջնորդվել առաջիկա 5 տարիներին դպրոցի ընթացիկ գործունեությունը պատշաճ կերպով կատարելու համար: Ցանկացած ծրագիր չի կարող լիարժեք կատարվել, եթե չլինի համապատասխան վերահսկողություն, ժամանակ առ ժամանակ կատարված, չկատարված կամ թերի կատարված աշխատանքների հաշվետվություն՝ ըստ ժամանակացույցի, վերլուծություն, արդյունքների գնահատում և հետագա անելիքների որոշում:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը, որին տարեկան 2 անգամ դպրոցը ներկայացնում է հավանության արժանացնելու համար: Դպրոցը ամեն տարի 5-ամյա զարգացման ծրագրի հիման վրա կազմում է տարեկան աշխատանքային պլանը, որը հավանության է արժանացնում մանկավարժական խորհուրդը:

Դպրոցի զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության համար պետք է նախատեսել վերահսկողության մեխանիզմ, համապատասխան հաշվետվության ձևեր և ժամանակացույցեր: Դպրոցի զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների լուծման համար նախատեսված գործողությունների վերահսկողության, հաշվետվության ձևերը և ժամանակացույցերը կիրականացվեն հետևյալ կերպ.

ա)Ուսումնադաստիարակչական աշխատանքները, ուսման որակի բարելավման վերահսկողությունը կազմակերպել հետևյալ կերպ.

1. Մեթոդմիավորումների աշխատանքների վերահսկողությունը, հաշվետվությունների ներկայացում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, այսինքն՝ամեն նիստից հետո, վերլուծությունների կատարում, տալ անհրաժեշտ ցուցումներ:

2. Օրվա դասի պլանի ստուգում, անհրաժեշտության դեպքում քննարկել և տալ ցուցումներ:

3. Դասալսումների կազմակերպում պարբերաբար, հատկապես սկսնակ և երիտասարդ ուսուցիչների դասաժամերին:Կատարել վերլուծություն, տալ ցուցումներ և խորհրդատվություն

4. Հետևել դասապրոցեսի կազմակերպման ընթացքին՝ շեշտը դնելով դաստիարակության վրա, ընդգրկել ծնողական խորհրդին:

5. Բաց դասերի, ուսումնադասատիարակչական տարբեր միջոցառումների կազմակերպում, ՏՀՏ գործիքների առավելագույն կիրառում:

6. Գրքերի քննարկումներ դասղեկների և գրադարանավարի համագործակցությամբ:

7. Տարեկան առնվազն մեկ անգամ կատարել ներքին գնահատում ,ամփոփել արդյունքները, առանձնացնել ուժեղ և թույլ կողմերը, շտկել բացերը և որոշել հետագա անելիքները:

բ) Մանկավարժական աշխատողի մասնագիտական որակների բարձրացում՝ ժամանակի բարեփոխումներին համընթաց:

1. Հետևողական լինել ուսուցիչների մասնակցության կրթական ոլորտում կատարվող բարեփոխումներին նոր չափորոշչի պահանջներին:

2. Ուսուցիչներին մասնակից դարձնել կրթական կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին, վեբինարներին:

3.Համագործակցել տարբեր դպրոցների ուսուցիչների հետ փորձի փոխանակման նպատակով:

4.Խրախուսել ուսուցիչներին և աշակերտներին տարբեր մրցույթներում և մրցումներում, օլիմպիադայի ասպարեզում հաջողություններ և հաղթանակներ գրանցելու համար:

գ)Նյութատեխնիկական բազայի բարելավում նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան:

1. Հետևողական լինել դպրոցի ունեցած գույքի և սարքավորումների պահպանմանը, տարեկան մեկ անգամ կատարել գույքագրում, արդյունքների վերլուծության հիման վրա խոտանել հետագա օգտագործման համար ոչ պիտանելին:

2. Ըստ անհրաժեշտության ձեռք բերել նոր գույք և սարքավորումներ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան

3.Առողջ ապրելակերպը հիմնախնդիր դարձնելու նպատակով ձեռք բերել համապատասխան մարզագույք՝ խթանելով ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը:

դ) Սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում

1. Խստորեն հետևել սանհանգույցների տեխնիկական վիճակին, մաքրության պահպանմանը

2.Միջոցները և դասասենյակները համապատասխանեցնել սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներին:

3. Պարբերաբար կազմակերպել մաքրման աշխատանքներ դպրոցի բակը, դպրոցամերձ այգին և շրջակայքը բարեկարգ և հիգիենիկ պահպանելու նպատակով, նաև խթանել աշխատանքային դաստիարակությանը:

4.Ձևավորել բարեխիղճ և սրտացավ վերաբերմունք բնության և շրջապատի նկատմամբ:

Յուրաքանչյուր տարվա ավարտին ներկայացնել հաստատության զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. N 35 Ն հրամանի ձև 2-ի ,որն է

N	Միջոցառում/գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/գործողության չկատարման կամ մասնակի կատարման /առկայության դեպքում/պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման գրավականը կլինի պատասխանատվություն սեփական խղճի առաջ, բարեխիղճ, համագործակցված և հետևողական աշխատանքը: